ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1-Ա

ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14 րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով

ավագանին որոշում է

1. Հաստատել ավագանու նիստի օրակարգը՝

1) Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Գեղամավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի <<Գեղամավանի համայնքապետարանի 2019 թվականի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 41-Ն որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություններ կատարելու մասին:

3) Գեղամավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՋԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 2-Ն

ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի <<ԳԵՂԱՄԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1ին մասի 28-րդ կետի, <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով,

ավագանին որոշում է

1. Գեղամավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 19-ի <<Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2019 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 41-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակից հանել վարորդի հաստիքը:

2) Համայնքապետարանի հաստիքացուցակի հայեցողական պաշտոնների խմբում ավելացնել համայնքի ղեկավարի տեղակալի հաստիք՝ դրույքաչափը հաստատել 120000 դրամ :

3) Հաստիքացուցակում հարկահավաքի հաստիքը փոխարինել փականագործի հաստիքով՝ դրույքաչափը հաստատել 130000 դրամ :

4) Հաստիքացուցակում պահակների հաստիքները փոխարինել բակապահի հաստիքներով:

5) Հաստիքացուցակում օժանդակ բանվորի դրույքաչափը 134250 -ի փոխարեն սահմանել 130000 դրամ:

2. Հաստատել Գեղամավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը ըստ հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՋԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամավան համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Գեղամավան, 026161021, 093251343, geghamavan.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 3-Ն

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթներով, <<բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 32-դ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

ավագանին որոշում է

1.Հաստատել Գեղամավան համայնքի 2019 թվականի բյուջեի նախագիծը՝

1.1 Վարչական բյուջեի եկամուտները՝ 46750.0 հազ. դրամ
1.2 Վարչական բյուջեի ծախսերը՝ 46750.0 հազ. դրամ
1.3 Վարչական բյուջեի հավելուրդը /դեֆիցիտը, պակասորդը/՝ 3777.8 հազ. դրամ
1.4 Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում ֆոնդային բյուջե՝ 390.0 հազ. դրամ
1.5 Ֆոնդային բյուջեի եկամուտներ՝ 2783,2 հազ դրամ
1.6 Ֆոնդային բյուջեի ծախսեր՝ 9100.0 հազ դրամ
1.7 Ֆոնդային բյուջեի հավելուրդը / դեֆիցիտը (պակասուրդը)՝ 6316.8 հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
ա) թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 20.0 % չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի

նախատեսված հոդվածների միջև,

բ) սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների գումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 20.0 %-ը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ

ՋԱՔԱՐՅԱՆ ԱՇՈՏ

ՋԱՔԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՉԻԿ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ